ՄԱՐԴԸ՝ ՈՐՊԵՍ ՆԱՐԵԿՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԳԵՐԱԿԱ ԴԵՐԱԿԱՏԱՐ

ՄԱՐԳԱՐՅԱՆ Մ. Մ., ԶԱՔԱՐՅԱՆ Մ. Գ.

Տարաբնույթ հեղափոխությունները, սոցիալական լայնածավալ ընդվզումները, անկախության համար մղված պատերազմները միշտ էլ մարտահրավեր են նետել մարդկությանը՝ փորձության ենթարկելով մարդուն: Այս նկատառումներով էլ մարդու հիմնախնդիրը, Վերածնդից սկսած մինչ այսօր, եղել և մնում է բոլոր մեծ հումանիստների ուշադրության կենտրոնում: Քանի որ Վերածնունդը, որպես ազգային իրողությունների սոցիալական և քաղաքական քննարկման արդյունք, հայ իրականության մեջ սկսվում է Գրիգոր Նարեկացիով (951-1003 թթ.), ուստի այս հանգամանքը մեզ հնարավորություն է տալիս ուսումնասիրելու մարդուն՝ որպես նարեկյան մշակույթի գերակա դերակատար: Նարեկացու ժամանակներում նորահայտ խաշնարած ցեղերն արդեն սկսել էին ասպատակել Բագրատունյաց և Արծրունյաց թագավորության սահմանները, իսկ քրիստոնյա Բյուզանդիայի դավերը հայերի դեմ զուգակցվում էին արաբա-բյուզանդական հովանավորությունը վայելող աղանդավորական շարժումներով: Այսպիսի սոցիալ-քաղաքական, հոգեբանական-մշակութային տրոհվածության մեջ Նարեկացին, մարդասիրական գաղափարները հիմք ընդունելով, փորձում է համամարդկային խընդիրներ լուծել. արդյո՞ք միջմշակութային տարածություններում գտնվող մարդիկ իրենց պաշտամունքով, հավատով և ապրած ընդհանուր կյանքով կարողանում են ինքնահաստատվել, ինքնադրսեվորվել և ինքնաիրացվել, թե՞ նրանցից յուրաքանչյուրը, իրավիճակով պայմանավորված, գործողություններ է կատարում՝ չհասկանալով մարդու գերագույն էությունը՝ արարել, ստեղծել, ինքնաճանաչողության միջոցով ապրել Բարձրյալի շնորհած կյանքը:

Նարեկացին, խստաբարո վանականների անհանդուրժող հայացքների ներքո ծանր ու դժվարին կյանքով ապրած, ժամանակի փայլուն կրթություն ստացած մարդը, բնականաբար, պետք է իրեն հարց տար. ո՞րն է մարդու էությունը, ինչո՞ւ են մարդիկ այդքան դաժան, անհանդուրժող: Իր իսկ առաջադրած հարցերին պատասխանելով անտիկ և քրիստոնյա տեքստերի հենքի վրա՝ նա բացահայտեց այն մարդուն, որի նպատակն է՝ գտնել յուրաքանչյուրին «դեպի լույս և կյանք», առ Աստված տանող ուղին[1]: Հեղինակի կարծիքով, միայն աստվածային լույսի ներքո արարման հավատի նկատմամբ ունեցած ուժը մարդուն հնարավորություն կտա դիմակայելու իրեն նետված մարտահրավերներին: Անտիկ և քրիստոնյա բնագրերի զուգամիտման օգնությամբ Նարեկացին ուսումնասիրում է Մարդուն՝ հիմք ընդունելով Պլոտինիոսի մոտեցումները: Ինչպես հավաստում է պատմաբան Ա. Ստեփանյանը՝ «Մարդ էակը, համաձայն Պլոտինիոսի, համադրական բարդ կառույց է՝ բաղկացած երկու ներհակ

[1] **Գարեգին Ա կաթողիկոս,** *Դեպի լույս և կյանք, Ե., 1994, էջ 125:*

բաղադրիչներից: Դրանցից մեկը՝ հոգեղենացած մարմինը կամ մարմնացած հոգին, արդյունք է հոգու ցանկական հատվածի և նյութի մերձեցման: Այն ապրում է առօրեական (կամ հասարակ) կյանքով՝ տրված մարմնական հաճույքներին ու տառապանքներին: Մյուս բաղադրիչը նույնական է հոգու բանական հատվածին, «...որը վեր է մարմնից և որին պատկանում են վերընթաց շարժումը, գեղեցիկն ու աստվածայինը» [II, 3, 9, 20-25]: Նա մեր հոգեմտավոր բարեկեցության աղբյուրն է, որի շնորհիվ «մենք ինքներս ենք»:

Մարդկային կյանքի գերագույն իմաստն ինքնակատարելագործման ճիգով աստվածակերպ դառնալն է [I, 1, 3, 10]: Ըստ որում, այդ գործընթացը կայանում է մարդու բարոյական առաքինությունների ձևավորման ճանապարհով, «...որպեսզի ամեն ոք ենթարկվի իր [մեջ առկա] կառավարող սկզբին, ինչպես զինվորը հրամանատարին»[III, 3, 13, 25]: Անտարակույս, «կառավարող սկիզբը» բանական հատվածն է, որին պետք է ենթարկվի մարմնականը: Այլ խոսքով, Պլոտինիոսը մարդ էակին դիտարկում է իբրև ենթարկելու և ենթարկվելու հարաբերությունների ամբողջություն»[2]:

Համաձայնելով վերոշարադրյալին՝ կարծում ենք, որ նարեկյան մշակույթում միաձուլվում են սոփեստներից սկիզբ առած և Արիստոտելի բարոյագիտական ու քաղաքագիտական համակարգերի ծիրում մշակված՝ Մարդու, ընտանիքի, պոլիսի, հանուրի գոյակարգի հիմքը կազմող առաքինությունները: Նարեկացին մի նոր աստիճանի է բարձրացնում Մարդու մասին իր ընկալումները՝ կարևորելով հումանիզմի գաղափարախոսությունը:

Մարդասիրական գաղափարախոսությամբ առաջնորդվող Գր. Նարեկացին հային հաղորդակից է դարձնում Աստծո լույսին՝ նրա միջոցով միավորելով անցյալ-ներկա-ապագա եռաչափության մեջ հայի ես-երը և ճանաչողության եզրերը տարածականության մեջ զուգամիտելով՝ ճշտում է Մարդու վերաբերմունքը առկա արժեքների հանդեպ: Ճանաչողությունն իր բազմաչափ բնույթով ամբողջանում է անտիկ և քրիստոնեական բնագրերով, որոնք էլ նարեկյան մշակույթին համատիեզերական մտայնություն են ներարկում: Այս հենքի վրա էլ գրողը զարգացնում է իր մարդասիրական գաղափարախոսությունը՝ մարդուն ներկայացնելով ինչպես Աստվածային լույսի, բարության, արարման, հավատի, սիրո, հույսի, այնպես էլ սատանայական խավարի, չարության, ավերչության, անհավատության, ատելության, հիասթափության և մերժման տիրույթներում:

Նարեկացին քրիստոնյա է, իրականության մեջ ապրող հայ մտավորական, որը, քաղաքական ժամանակի հրամայականով պայմանավորված, բնականաբար հետևյալ հարցին պետք է փորձեր պատասխան գտնել. ինչպե՞ս հարաբերվել Բարձրյալի և մարդ արարածի հետ՝ փոփակերպվելով ժամանակի բանականության պահանջներին համապատասխան: Այս գործընթացում մարդը մասնակցում է

---

[2] **Պլոտինիոս,** *Էննեադներ, գիրք 5 (Հաղագս Բանականի), հին հուն. թարգմ., ուսումնասիրություն և մեկնություններ՝ Ա. Ստեփանյանի, Ե., 1999, էջ XXXVI-XXXVII:*

կարգապահպանության համակարգի ստեղծմանը, որն էլ անցյալ-ներկա-ապագա եռաչափության մեջ նպաստում է, որ մարդը՝ որպես ինքնահաստատված «ես», կարևորի իր ներկայության պատասխանատվությունը սերունդների առջև՝ նրանց թողնելով հավատը, հույսը, սերը՝ որպես ճանաչողության իսկության դիտարկման միջոց: Նարեկացին իր ճանաչողության արժեքային համակարգը խարբսխում է՝ ա) Ճանաչի՛ր ինքդ քեզ, բ) Պահպանի՛ր համակեցության կանոնները, գ) Երջանիկ է նա, ով երևույթների միջև եղած կապն է հասկանում սկզբունքների վրա: Այս եռաչափ ճանաչողական համակարգը գրողին հնարավորություն է տվել հարահոս ժամանակի և տարածության մեջ քննել հավաքական ՄԱՐԴՈՒ ինքնահաստատման կերպարային «ես»-երի դրսևորումները: Մարդն էլ նրան ընձեռել է «ես»-ի ճանաչողության գործընթացը պարուրաձև զարգացնելու տարաբնույթ ժամանակների և տարածական հարթությունների միջև: «Ես»-երի ինքնադրսևորումը համադրվում է Աստծո հետ երկխոսության և բանավեճի միջոցով, որի ընթացքում ճշտվում է մարդու տեղն ու դերը Աստծո կողմից արարված բնության մեջ՝ փորձելով տեսնել կապը մարդու, Աստծո և բնության միջև, քանի որ յուրաքանչյուրն իր գոյաբանական առանձնահատկություններով է ներդաշնակվում համատիեզերականին: Հենց այս եռամիասնության խնդիրն էլ զբաղեցնում է Նարեկացուն: Ընդունելով ճանաչողությունը որպես բազմամակարդակ երևույթ՝ նա բացահայտում է «ես»-երի փոխպայմանա-վորվածությունը: Ընդունելով Աստծո գերակայությունը՝ հեղինակը մարդուն արարման խորհրդի միջոցով օգնում է, որ նա ճանաչի իսկությունը՝ ընդունելով Աստծո գերակայությունը՝ որպես հանուրի արարիչ:

Նարեկացին Մատյանում իր աշխարհաճանաչողության մանրակերտը կառուցակարգել է միջնադարյան հայ մարդու կենսակերպով պայմանավորված՝ ամբարելով անտիկ շրջանից մարդ արարածի մասին կուտակված հայեցակարգային ճշմարտությունները: Գրականագետ Հր. Թամրազյանը այդ առումով գրում է. «Նարեկյան դպրոցի ներկայացուցիչների հոգևոր իդեալը մարդու աստվածացման գաղափարն է... Մարդու աստվածանմանության, աստվածացման այդ գաղափարը կենտրոնական տեղ է գրավում Անանիա Նարեկացու իմաստասիրական համակարգում, որն ուղղակի առնչություններ ունի Պլատոնի, Փիլոն Ալեքսանդրացու, Դավիթ Անհաղթի և արեոպագիտյան ավանդույթների հետ»[3]: Վերջիններիս մշակած ճանաչողական այս բազմաչափ համակարգն ընդունելով՝ մարդու ինքնահաստատման, ինքնաճանաչողության և ինքնիրացման ճանապարհին Նարեկացին ճանաչո-ղությունը ամբողջացնում է բազմաչափ սիրո փիլիսոփայությամբ, այսինքն՝ սերը նրա Մատյանում քննարկվում և զուգամիտվում է և՛ Արարչի, և՛ մարդկանց, և՛ իրականության ու բնության նկատմամբ: Բազմաչափ սիրո այս զուգամիտումներն էլ մեզ հիմք են տալիս

[3] **Թամրազյան Հր.,** *Գրիգոր Նարեկացին և նորպլատոնականությունը, Ե., 2004, էջ 17, 34:*

Նարեկացուն համարել կենսասիրության և համակեցության փիլիսոփա[4]. որպես այդպիսին նա մի նոր աստիճանի բարձրացրեց մարդու հայեցակարգը և հնարավորություն տվեց մարդուն հայացքն ուղղել դեպի ապագա՝ հավատով, հույսով և սիրով:

Նարեկացու այս մոտեցումը հայ ՄԱՐԴՈՒՆ դարերի հոլովույթում օգնել և օգնում է ճանաչել կյանքը՝ որպես հոգնակի երևույթ, նրան՝ բնության մասնիկին, ստիպելով իր կենսասիրությամբ պատասխանատու լինել Արարչի, մարդկության և բնության առջև: Արարչին երկրպագելով, որը հնարավորություն է տալիս հավատի օգնությամբ ճանաչել բնությունը, իրեն և ամենքին՝ Նարեկացին այդ գործողությունների հիմքում դնում է կենսասիրությունը և համակեցություն՝ հանուն բնության և բանականության էկոլոգիայի փոխպայմանավորվածության[5]: Վերջինիս օգնությամբ հեղինակը բնության միջոցով մարդուն ուղղորդում է դեպի հոգևոր աշխարհ՝ փորձելով շեղել նրան սոցիալական ծանր խնդիրներից, ինչպես նաև նյութականի հանդեպ մարդու կախվածությունը դնել բանական հիմքերի վրա:

Սեփական պահանջմունքների բավարարման գործում զսպվածություն ցուցաբերելով՝ նարեկյան մշակույթը յուրացրած ասկետ մարդը հնարավորություն է ստանում այս սկզբունքի շնորհիվ սեփական անվտանգության համակարգ մշակել: Այս ամենն էլ մեզ հիմք է տալիս եզրակացնելու, որ նարեկյան ասկետիզմը[6], անջրպետված արևելյան ասկետիզմին բնորոշ օտարվածությունից, հագեցված կենսասիրությամբ, իրականության հանդեպ իր քննական վերաբերմունքով՝

---

[4] *Բազմաչափ սիրո հայեցակարգը հազար տարի հետո արևմտյան գոյաբանական փիլիսոփայության մեջ, հենվելով նեոպլատոնականության և նեոկանտականության վրա, համակարգեց Է. Ֆրոմը (1900-1980), որը, լինելով նեոֆրեյդիզմի հիմնադիրներից մեկը, բացահայտեց մարդու բնույթը՝ դիտարկելով սերն առ Աստված, ծնողներ, բարկամներ, բնություն և զուգընկեր փոխպայմանավորվածության մեջ (տե՛ս* **Ֆրոմ Է.,** *Սիրելու արվեստը, թարգմ. և առաջաբանը՝ Մարգարյան Մ., Ե., 1996):*

[5] *Էկոլոգիա հասկացությունը չենք թարգմանել բնապահպանություն, քանի որ XX դ. 50-ական թթ. փիլիսոփա Գ. Բեյտոնը (1904-1980), հանգամանալից ուսումնասիրելով նեոպլատոնականությունը, գտավ, որ այն բնության և բանականության էկոլոգիայի փոխհարաբերությունների պահպանման համակարգ է: Միանշանակ համաձայնվելով Բեյտոնի հետ՝ կարծում ենք, որ նեոպլատոնականության արժեքաբանությամբ հագեցված նարեկյան մշակույթն առաջինն է, որ համակարգված ներկայացնում է բնության և բանականության էկոլոգիան՝ հանուն հայ ինքնության ներդաշնակ և անվտանգ գոյաբանության:*

[6] *Ասկետիզմ (հուն. askesis). մրցումներից առաջ հունական մարզիկները ֆիզիկական վարժությունների և մարզումների օգնությամբ սովորում էին ճնշել մարդու՝ զգայական բնույթով պայմանավորված պահանջները, որ հասնեն բարոյական կատարելության և աստվածային հարաբերությունների: Տարաբնույթ մշակույթներում ոգու և նյութի փոխհարաբերությունները, որպես երկու թշնամական սկիզբների մոտեցում, ժամանակի ընթացքում մերժվեցին (պյութագորականներ), հանուն ոգու ամրության՝ մարդն առանձնանալով, օտարվելով հաղթահարում է աղքատությունը, անօրինականությունը և զգայականությունը (Энциклопедический словарь русского библиографического института Гранат, под. ред. проф. Гамбарова Ю. С. и др., т. IV, М., с. 67-68).*

մարդուն հնարավորություն է ընձեռում ճանաչողության գործընթացը դարձնել բանական: Իրականության հանդեպ միայն այսպիսի մոտեցումն էլ հնարավորություն է տալիս վեր կանգնել այն աննրդաշնակ կեցությունից, որի մեջ ինքը գտնվում է՝ նյութի և մտքի անհամատեղության պատճառով:

Մարդը պետք է ընդունի հոգևորը՝ միտքը, գաղափարը՝ նմանվելով արարիչ Աստծուն, քանի որ նյութական աշխարհը փոփոխական է, սակայն իմաստազուրկ չէ, և չի կարելի գերի լինել ինչքին: Ընդունելով աշխարհը հարաբերական ամբողջության մեջ՝ Նարեկացու ասկետիզմը ներկայանում է երկու հիմքով՝ նյութական և ոգեղեն, որոնց օգնությամբ գրողը փորձում է երկվության հաշտեցման եզրերը տեսնել Աստծու արարած ամենակատարյալ էակի՝ մարդու հոգում, ինչն էլ պայմանավորում է նրա իրատեսական մոտեցումները հարահոս շրջապատի նկատմամբ.

Կորնչիմք, եւ ոչ հիանամք,
Թաղեցեալ լինիմք, եւ ոչ խոնարհիմք,
Տարագրիմք, եւ ոչ տագնապիմք,
Եղծանիմք, եւ ոչ զղջանամք,
Մաշիմք, եւ ոչ մտառեմք,
Պակասիմք, եւ ոչ պատրաստիմք,
Գնամք, եւ ոչ զգուշանամք,
Գերիմք, եւ ոչ եւս զգամք[7]:

Լինելով ժամանակի սոցիալ-քաղաքական հարաբերությունների կրողն ու արտահայտիչը՝ Նարեկացին ուսումնասիրում է մարդու էությունը, նրա բարոյական, մարդասիրական դիմագիծը՝ պայմանավորված իր նմանների հանդեպ ունեցած վերաբերմունքով: Ժամանակակից մարդու կերպարի, նրա որպիսության և լինելության բազմակողմանի բացահայտումը ուղղված էր իշխող դասի կողմից քարոզվող բարոյական սկզբունքների դեմ, քանի որ նրանք, խեղելով իրականությունը և խաղարկելով մարդու գիտակցությունը, գերիշխում են՝ ոչ միայն իրենց կամքը պարտադրելով, այլև ոգեղենականությունն անտեսելով. «ամեն կողմից աղքատության հնոցն է մրրկում»: Մարդու մասին Նարեկացու դիտարկումներն այնքան բազմաչափ են, որ նա, «հոգեկործան կայսրերի» և «զրկող զորականների» կերպարների բացահայտմանը համատեղ, փորձում է Քրիստոսի՝ «անթերի մարդկությամբ, անապական աստվածությամբ» կերպարի միջոցով՝ ուշադրություն հրավիրել մարդու երկակի բնույթի վրա՝ պայմանավորված նյութական և հոգևոր ակունքներով: Այդ երկուսի մեջ միայն մեկ պարագայում կարող է ընդհանրություն լինել. եթե մարդը ցուցաբերի անսպառ սեր Աստծո, բնության և իր նմանների նկատմամբ՝ ղեկավարելով իր կենդանական սկիզբը և դրանից բխող հետևանքները: ԾԶ-Բ բանում Նարեկացին, մարդու երկակի բնույթով պայմանավորված, համակարգված ձևով ներկայացնում է մարդկային բազմադիմությունը՝ անկախ նրա սո-

[7] **Գրիգոր Նարեկացի,** *Մատեան ողբերգութեան, աշխատասիրությամբ՝ Խաչատրյան Պ. Մ. և Ղազինյան Ա., Ե., 1985, էջ 446-447 (ԾԵ-Գ):*

ցիալական կարգավիճակից և նյութեղենի հանդեպ ցուցաբերած գայթակղություններից: Մարդ-Աստված-հասարակություն-բնություն աստիճանակարգում մարդու կարգավիճակին անդրադառնալով՝ Նարեկացին հատկապես առանձնացնում է իշխողների, կառավարիչների «մանրախնդրությունը, գծուծությունը», և այստեղ առկա է նրա հարազատությունը Մ. Խորենացու «Ողբ»-ին:

Ողբը, որպես անցյալ-ներկա-ապագա արժեքային տրոհվածության արդյունք, մարդուն հաղորդակից է դարձնում քաղաքական ժամանակի հոլովույթում ձևավորված ապակառուցողականությանը՝ բացահայտելով նյութականության հանդեպ նրա ցուցաբերած գայթակղության անարդյունավետությունը: Քննության ենթարկելով ժամանակի սոցիալական աստիճանակարգը՝ Նարեկացին Աստծու կամոք «թագավոր և իշխան» կարգավիճակում ծնված մարդկանց քննադատում է այսպիսի դերակատարման պատճառով. «որոնք մեռցնելու, քան թե կյանք տալու հնարներ են միշտ մտածում մի-այն»[8]: Այնուհանդերձ, հեղինակը Մարդուն չի պատկերացնում առանց հայրախնամ իշխանության, որը, ճիշտ է, Աստծու մենաշնորհն է, սակայն Աստծու թույլտվությամբ՝ նաև երկրային իշխանությունը կրողի առաքելությունը: Հրապուրված իրենց իշխանությամբ՝ նրանք, ներկայանալով Տիրոջ անունից, իրենց զոռոզությամբ, նյութապաշտությամբ, անհանդուրժող կեցվածքով խախտում են Աստծո հաստատած կարգ ու կանոնը՝ խաթարելով Մարդու հավատը Աստծու հայրիշխանության նկատմամբ:

Թոնդրակյան շարժման ծնունդ «ամբարիշտ խառնակությունների»[9] ականատես Նարեկացին գիտակցում է, որ հեղափոխական կողմնորոշումը չի բարելավելու ժողովրդի ծանր վիճակը: Այս մտայնությամբ էլ նա կամուրջ է ստեղծում «հեթանոս» անցյալի և քրիստոնյա ներկայի միջև՝ կարևորելով ապրողների համար չարին չընդդիմանալու հակվածությունը. հանդուրժող լինել ոչ թե «ես»-ը նվաստացնելով, այլ չարին չընդդիմանալով, որպեսզի չարը, տարածություն չգրավելով, կորցնի իր «ես»-ը. «Մի՛ կալ հակառակ չարին» (Մատթ. Ե. 39-40):

Յուրաքանչյուրը չէ, որ կարողանում է իր մեջ դաստիարակել չարի հանդեպ բանական վերաբերմունք՝ նրան հակադրվելով կամ ընդունելով: Մարդը, խաթարելով «ես»-ի բնականոն գործընթացը, չարին հնարավորություն է տալիս կլանելու իր եսը, իսկ չարը, ներկայանալով կեղծ բարեպաշտի դիմակով, ներառում է տարբեր «ես»-երի «դրական» զգայական կողմը և առավել զգուշավոր խաղարկում նրա՝ արդարության համար պայքարի դրսևորումները:

Շտապողականությունը, չարությունը, անհանդուրժողականությունը, զավթելով մարդու «ես»-ը, նրան հնարավորություն չեն տալիս հաղորդակցվելու Աստծո հետ և կարևորելու այդ խորհուրդը: Հաղթանակ տանելով՝ չարին թվում է, որ ինքը ոչ թե հաղթել է իրավիճակով պայմանավորված, այլ հաղթել է Աստծուն, մինչդեռ

---

[8] *Նույն տեղում, էջ 446-447 (ԾԱ-Ա):*

[9] **Մովսես Խորենացի,** *Հայոց պատմություն, Ե., 1981, էջ 361-362:*

դատելու և պատժելու իրավասությունները ոչ թե մարդուն, այլ Բարձրյալին են տրված: Պարուրաձև զարգացում ենթադրող մարդ-Աստված հաղորդակցական համակարգը, աստիճանաբար հարստացնելով մարդու ճանաչողությունը, բյուրեղացնում է նաև մարդ-բնություն հաղորդակցական կառուցակարգը. այս դեպքում էլ մարդն իր չարդարացված պահանջներով բնությունը չապականելու համար, այն պետք է համարի համընդհանուր մարդկային կացարան՝ որպես մարդու կեցության միակ ռեալ ապաստանը: Այս ենթատեքստով էլ պետք է մեկնել Նարեկացու ԻԶ բանի «Ի նոյն գիր բերեալ զաւարմունս տանցն» տողի «տուն» բառը: Աշխարհը մարդու տունն է, և մարդն իր հոր տանը պետք է իրեն ապահով և անվտանգ զգա:

Մինչդեռ մարդը, գերի զգացմունքներին, միշտ չէ, որ կարողանում է զսպել իր չարությունը, նախանձը, անհանդուրժողականությունը տարբեր «ես»-երի նկատմամբ: Նա հաճախ կարող է գայթակղվել իր անհանդուրժողականությամբ, որպեսզի վերացնի իր կողմից չընդունված տեսակին: Հետևաբար, տեսակն իրավունք չունի տեսակին ոչնչացնելու, որովհետև նման դեպքում կամ մարդն է աղքատանում՝ կորցնելով իր «ես»-ը, կամ էլ «ես»-ը կորցրած մարդը կորցնում է Աստծու հետ հաղորդակցվելու կառուցակարգը: Նեոպլատոնականության հիմքի վրա համակարգված բարոյականության այս դրսևորումները դարերի հոլովույթում շփման եզրեր են գտնում գերմանացի մեծ մտածող Է. Կանտի՝ առանց պայմանի բարոյական պատվիրանների պարտադիր ընդունման հետ, որոնց հիմքում պարտքի և պարտականության գիտակցությունն է. «Բարոյական օրենքը սուրբ է (անխախտ)…»[10]:

Մատյանում Նարեկացին ողբում է Արարչի դեմ ընդվզող անբարո մարդ արարածին: Աստված-մարդ հարաբերություններում անվերապահորեն ընդունելով Աստծո մեծությունը՝ նա միաժամանակ բողոքում է Բարձրյալին. մի՞թե չգիտեիր, որ այդքան թույլ ու անկամ էակ ես ստեղծել, ինչպե՞ս քո Որդուն նրանց վստահեցիր: Քրիստոսի խաչելությունը միայն մարդկանց ապացուցեց, որ Մարդը թերի է, անկատար, ընչաքաղց, հաշվենկատ, դիմակավոր, չար ու շողոքորթ: Տերը մարդուն տանում է փորձության՝ իր միածին Որդուն ուղարկելով մարդկությանը փրկելու, միաժամանակ ապացուցելու, որ հարատև ժամանակի ու տարածության մեջ նա իր անկատարությամբ և ապակառուցողականությամբ չհանդգնի աստվածային արարչության դեմ ոտնձգություն կատարել: Լինելով հարուստ, հաջողակ, գիտելիքների տեր՝ Մարդը ինքնահաստատվում է որպես «ես», և եթե ջատագովն է հանդուրժողականության, բարության, մարդասիրության, ապա միայն այս պարագայում է նա դիմակայում Աստված դառնալու գայթակղությանը: Բարձրյալը մարդուն արարել է՝ նրան պար գնելով ապրելու իրավունք, որի խորհուրդը քննելով՝ գրողն ի հայտ է բերում ժամանակի և տարածության մեջ սոցիալական լողացող միավորի իր եռաչափ (ցանկական, բանական, ցասումնական) պատ-

[10] **Кант И.** *Собрание сочинений, т. 4, М., 1965, с. 414.*

կերացումները: Այս տիրույթում էլ հեղինակը մի դեպքում ժամանակը դիտարկում է մարդու մանկության, հասունության, ծերության գոյաբանական պարույրում, այլ դեպքում՝ մարդ-բնություն-տիեզերք հարաբերությունների ընկալման, մեկնության և ճանաչման տարածական ծիրում: Հարաբերական անկախության մեջ համակարգաստեղծ այս ճանաչողության միջոցով էլ տիեզերքն իր մեջ ամբարած մարդը՝ տիեզերքի քաղաքացին, ճանաչողության երկակի եռաչափության մեջ իրեն իրավունք չի վերապահում, տարվելով նյութականությամբ, անտեսել գոյի և չգոյի փոխհարաբերությունները:

Նարեկացու ճանաչողութունն ամբողջության մեջ ունի կարգապահպանման այնպիսի համակարգ, որը մարդուն իրավունք չի վերապահում ասելու.

Չքնա՛ղ ես դու, կա՛նգ առ, վայրկյա՛ն,
Արդեն գրկում հավերժության
Չի կորչի հետքն իմ երկրային:
Կանխազգալով նման վսեմ երջանկություն,
Վայելում եմ ես ակնթարթն իմ գերագույն [11]:

Նարեկացու կերտած Մարդը չի կարող Ֆաուստի նման ասել. «Կա՛նգ առ, վայրկյան», այլ սոսկ ձուլվում է բնությանը՝ իրեն համարելով նրա մասնիկը: Որպես բանական էակ՝ նարեկյան մշակույթի Մարդը փառաբանում է բնությունը. եթե ոչ ինքը, ապա ո՞վ. չէ՞ որ Աստված իր նմանությամբ միայն իրեն է ստեղծել: Ուրեմն, Աստված մարդուն ստեղծել է նախ՝ իրեն աղոթելու, ապա՝ բնությունը փառաբանելու, օրհներգելու, որից հետո միայն ճանաչելու համար:

Մարդը՝ մեղավոր, անկատար և նյութապաշտ այդ էակը, ապրելով Աստծո ստեղծած «բնություն» կոչվող կացարանում, պետք է իմաստնանա Աստված-բնություն-Մարդ հարաբերություններում: Հետևաբար՝ նարեկյան մշակույթի Մարդն իր բազմաչափությամբ և՛ Իկարոսն է, և՛ Դեդալոսը[12]: Զարգացող բազմաչափ իրականության մեջ ինքնադրսևորվող մարդը փոխակերպվում է բանականության և զգայականության տիրույթներում. եթե Իկարոսը իր մոմե թևերով փորձում է հասնել արևին, ապա նրա հայրը՝ Դեդալոսը՝ հարուստ կենսափորձով և ստեղծագործ մտքով, բանական մոտեցում է հանդես բերում. երկաթե թևեր է պատրաստում և դուրս գալիս լաբիրինթոսից:

Նարեկացին Մատյանում Ժամանակի ու տարածության մեջ մարդուն դիտարկում է և՛ բանական, և՛ ցանկական, և՛ ցասումնական եռամիասնությամբ՝ չտալով միանշանակ պատասխան, թե որ վիճակն է մարդուն առավել մերձեցնում Աստծուն: Հանճարեղ մտածողի կարծիքով, աշխարհը պետք է ներդաշնակ լինի, քանի որ արարիչ Աստված բոլորին ստեղծել է սիրով և նրանց տեսակը կարևորել, որովհետև նրանցից յուրաքանչյուրն արարվել է որոշակի առաքե-

[11] **Գյոթե,** *Ֆաուստ, Ե., 1967, էջ 394:*
[12] *Դիցաբանական բառարան, Ե., 1985, էջ 101:*

լությամբ: Հենց այս հանգամանքն էլ ապահովում է տեսակների հոգնականությունը՝ շեշտելով նրանց պատասխանատվությունը աշխարհի ներդաշնակ գոյության հանդեպ: Արարչի ստեղծած յուրաքանչյուր էակ արարվել է իր տեսակի բացառիկության պատճառով, և այսօրինակ ընկալումը թույլ է տալիս ասելու, որ Նարեկացին փորձել է վեր կանգնել իր ժամանակի եսակենտրոն և սահմանափակ ընկալումներից:

Հին և նոր հազարամյակների հանդիպման խաչմերուկում նոր հազարամյակի սկիզբն իր հետ բերում է նոր արժեքային համակարգ՝ հաղթանակներով ու պարտություններով, հերոսներով ու հակահերոսներով պայմանավորված, և ակնկալիքներ, որոնցով մարդը թևակոխում է նոր ժամանակներ: Գլխապտույտ կերպափոխությունն- ների շրջապտույտից ծնված այս անորոշությունները կանխելու, ոգու արիությունը պահպանելու նպատակով էլ Նարեկացին մարդասիրությունը ներկայացրեց որպես բարձրագույն արժեք: Հետայսու հայ ազգային ինքնության պահպանման տեքստը, դարերի հոլովույթում արդիականանալով, մարդասիրությունը բարձրացնում է համաշխարհային մակարդակի: Մեր համոզմամբ, Մարդու «ես»-ի տեսակի ներդաշնակ կեցության առումով համազգայինի և համամարդկայինի զուգամիտումները նարեկյան մոտեցումներով առկա են սոցռեալիզմի դեմ «իններորդ ալիքի» ուժով պայքարող Պ. Սևակի երկերում: Նրա վրձնած մարդը միաժամանակ և՛ բանական, և՛ զգայական է. կարողանում է սիրել ու ատել, արհամարհել և, ամենակարևորը, իր նմանների հանդեպ հանդուրժողական վերաբերմունք է պահանջում: Պ. Սևակը, ժառանգորդը լինելով Նարեկացու մարդասիրության, հանուն աշխարհի ներդաշնակ գոյության և այլ տեսակների հանդեպ նրա հանդուրժող վերաբերմունքի, խորհրդային հասարակարգում ձևավորված վախի ու սարսափի մթնոլորտում ապրող մարդու համար փորձում էր մեկնաբանել, թե ով է ինքը, ինչ է սիրում և մերժում, այսինքն՝ մարդկային բարոյական արժեքային այն բարձր համակարգը, որը հաստատուն է բոլոր ժամանակների համար: Սևակյան ըմբոստությունն ուղղված էր մարդկային այն հակաարժեքների դեմ, որոնք խոչընդոտում էին խորհրդային մարդու մեջ մարդասիրական և բարոյական բարձր արժեքների ձևավորումը: «Խորհրդային նմանօրինակ կյանքի թատրոնում մարդկային «ես»-ի մեկնաբանություններից հեղինակը երեք հետևության է հանգում՝ իր ընդվզելու կարողությունը, ազատության զգացումը, մաքրակենցաղ ապրելու կենսասիրությունը»[13]: Այս հենքով էլ նրա «Մարդը ափի մեջ» ժողովածուն (այդ թվում՝ բառախաղերը. սիրում եմ - ատում եմ և այլն) տրամաբանական շարունակա- կանությամբ կամրջվում են Գ. Նարեկացու գոյաբանությանը և մարդաբանությանը:

Բարդ աշխարհաքաղաքական տարածքում ապրող Նարեկացին, անդրադառնալով մարդու տեսակի քննությանն ընդհանրապես,

---

[13] *Տե՛ս* **Զաքարյան Մ.,** *Մարդը «Մարդը ափի մեջ» շարքում (Հայոց լեզու և գրականություն, 2002, N 5, էջ 32-38):*

զարգացնում է մշակութային այնպիսի տեքստ, որը հայ մարդուն մի դեպքում հնարավորություն կտա դիմակայել չարին, մյուս դեպքում՝ Հին և Նոր կտակարաններում առկա կերպարների կենսափորձով պայքարել դրա դեմ: Ելակետային այս մոտեցմամբ Նարեկացին, ընդարձակելով հայ մարդու կեցության ճանաչողությունը, մշակել է նրա ոգեղենական գոյությունն ապահովող համակեցության կանոններ, որոնց համար հիմք են հավատը, հույսը, սերը: Դրանով Նարեկացին, համալրելով Մ. Մաշտոցի, Եղեշեի, Մ. Խորենացու, Ե. Կողբացու, Դ. Անհաղթի մոտեցումները, «Հոգևոր Հայաստանի» գաղափարական «ես»-ի կերտումը հասցրեց նոր մակարդակի[14]:

Քննադատելով մարդուն սահմանափակ մտայնության համար՝ Նարեկացին միաժամանակ նրա ուշադրությունը հրավիրում է աշխարհի բազմազանության և այն այդպիսին տեսնելու՝ Աստծու տրված հնարավորությունների օգտագործման վրա: Իսկ դրա համար մարդը, Աստծո առջև աղոթելով, պետք է խոստովանի իր թուլությունները, արատներն ու մեղքերը, որպեսզի կարողանա ճանաչել արարված բազմաչափ աշխարհը: Ընդունելով աշխարհն այդպիսին՝ նա ինքն իրեն հնարավորություն է տալիս ճիշտ կողմնորոշվելու ապագայում: Եվ Նարեկացու համար խոսքը միջոց է մարդու ուշադրությունը կենտրոնացնելու Աստծո արարած աշխարհի բազմաչափության վրա: Գեղարվեստական խոսքի միջոցով Նարեկացին բացահայտում է այն ուղիները, որոնց օգնությամբ մարդը կարող է վեր բարձրանալ նյութական աշխարհի ապակառուցողական իրողություններից: Նա չի ցանկանում տեսնել միայն նյութով արժևորված աշխարհը, քանի որ ընչաքաղցությունը մարդուն դարձնում է ոչ միայն ինչքին գերի, այլև թույլ չի տալիս Աստծո կողմից իրեն պարգևած ժամանակն ու տարածությունն անցնել արարելով՝ հիմք ընդունելով ոչ թե ունենալ լինելու համար, այլ լինել ունենալու համար սկզբունքը. չէ՞ որ նյութով ախտահարված հոգեբանության տեր մարդու հոգին անհաղորդ է ոգեղենականությանը:

Այս համատեքստում էլ Նարեկացին՝ թոնդրակյան, և սոցիալական այլևայլ բախումների ականատեսը, վստահ է, որ մարդը հընարավորություն ունի իր բարության, բարոյականության, հանդուրժողականության, արդարադատ մտածելակերպով զգալ և՛ իրեն, և՛ իր նմաններին ու ընդհանուր համակեցություն, աշխարհաքաղաքացիություն ենթադրող կանոններ մշակել: Գրողը քննում է մարդու բնույթը՝ աշխարհաքաղաքացիական խնդիրը դիտարկելով հայ մարդու կեցության ոսպնյակով[15]: Ներդաշնակ և ոգեղեն աշխարհի ջատագովը լինելով՝ Նարեկացին ընդհանրացնում է «Պահպանի՛ր կարգը, որ կարգը պահպանի քեզ» սկզբունքը, իսկ կարգի պահպանման համակարգն արդեն գրողի մոտ բազմաչափ է՝ ա) արարչագործ երեք միասնությունը՝ Հայր Աստված, Հիսուս Քրիստոս և Սուրբ Հոգի, բ) մարդու հոգևոր և ֆիզիկական գոյի վրա Աստծո գերակա-

---

[14] *Տե՛ս* **Մարգարյան Մ.,** *Հոգևոր Հայաստանի գաղափարախոսությունը արդիականացման գործընթացում (Բազմավեպ, 2004, N 1-2, էջ 185-2005):*

[15] **Շանթ Լ.,** *Երկեր, հ. IX, Պեյրութ, 1946, էջ 114:*

յությունը, քանի որ նա, կավից ստեղծելով մարդուն, արարման իրավունքն իրեն է վերապահել: Եթե մարդը ցանկանում է խաղաղ ապրել իր և այլ «ես»-երի հետ, ապա առաջին հերթին պետք է ընդունի Աստծո, Սուրբ Երրորդության գերակայությունը և առաջնորդվի Արարչի տասը պատվիրաններով:

Մարդու հիմնահարցի քննությունն առավել ընդգրկուն դարձնելու նպատակով էլ գրողն իր բազմահարուստ լեզվական միջոցներով շրջանառության է դրել «ինքն» դերանվամբ կազմված բառեր՝ առավել ակնառու դարձնելով «ես»-ի զարգացման ժամանակային պարույրը՝ անցյալ-ներկա-ապագա շղթայում այն ներկայացնելով որպես մարդու տեսակի կեցության կամ գոյաբանության հիմնախնդիր: Նարեկացին կարևորել է մարդու «ես»-ի ինքնամաքրման ունակությունները, քանի որ, գրողի կարծիքով, մարդը միայն այդ պարագայում կարող է արժևորել, գնահատել Արարչին՝ նրա հետ ոչ միայն հաղորդակցվելով, այլև երկխոսելով. ինքն, ինքնաբանական, ինքնաբերական, ինքնաբուն, ինքնագործ, ինքնագրաւ, ինքնաթոյն, ինքնածին, ինքնակալ, ինքնակալութիւն, ինքնակամ, ինքնակիր, ինքնակըշտամբելի, ինքնահարուած, ինքնամատոյց, ինքնամարտ, ինքնանախատ, ինքնապարսաւ, ինքնասաստ, ինքնասիրութիւն, ինքնաստեղծութիւն, ինքնավկայ, ինքնագոյ, ինքնարշաւ, ինքնաւոր, ինքնին, ինքնիշխան, ինքնիշխանութիւն, ինքնութիւն, ինքնօրէն[16]: «Ինքն» դերանվան օգնությամբ աշխարհն ընկալելով հարաբերական միասնության և բազմաչափության մեջ՝ մեր կարծիքով, Նարեկացին կարևորել է մարդու (դիցուք՝ հայի) փոխակերպման հնարավորությունները, որոնցից չօգտվելու դեպքում տարածության մեջ բացահայտվում է տեսակների աններդաշնակ ընկալման հակասությունը: Հետևաբար, առաջնորդվելով հանդուրժողականության կարգախոսով՝ Նարեկացին մարդուն կոչ է անում ճանաչել իր նմաններին և հանդուրժող լինել նրանց՝ ինչպես չիմացության, այնպես էլ ապակառուցողական գործողությունների հանդեպ: Ելակետ ընդունելով նշված տիրույթներում գոյը և չգոյը՝ յուրովի է ընկալում արարումը. Նարեկացու՝ աշխարհաքաղաքացի մարդու արժեհամակարգի կերտման փիլիսոփայական, մարդասիրական առանցքը ներառում է և՛ սոցիալական, և՛ ազգային տարածական բազմաչափությունը: Տարածական այդ հարթություններում կատարած բազմաբնույթ գործողությունների օգնությամբ Նարեկացին մարդ-մարդ հարաբերություններում ուրույն կառուցակարգ է մշակում՝ ինքնամաքրվել ինչպես երկխոսության, այնպես էլ բանավեճի միջոցով: Նարեկացու համոզմամբ, ախտից ազատվելու միայն մեկ ճանապարհ կա. եթե մարդը երկխոսության միջոցով համոզվի, որ նյութը հոգուն բավարարել չի կարող, և նա գործողություններ կատարելիս տարածությունը և ժամանակը լցնի ինքնահամագործակցության, ինքնահիրացման գործոններով: Այս ճանապարհով Նարեկացին բժշկել և բժշկում է մարդու հոգին, մաքրում ախտերից՝

[16] **Գրիգոր Նարեկացի,** *Մատեան ողբերգութեան (Հայկական համաբարբառ, Պուենոս Այրես, էջ 593-598):*

նկատի առնելով չորս տարրերից կազմված մարդու էությունը: Լինելով անտիկ փիլիսոփայության չորս տարրերի մասին տեսության հետևորդը՝ Նարեկացին ԻԶ բանում «Բազմահատուած էութիւն բընութեանս, ներհակք միմեանց ի պատերազմի» տողով նկատի է ունեցել մարդկային էությունը՝ կազմված չորս սկզբնական տարրերից՝ հուր, օդ (երկնային), ջուր, հող (երկրային): Տերը արարել է այս ներհակ տարրերի հակադրամիասնությունը՝ տիեզերքի ներդաշնակությունը, իր ստեղծած արարածների խաղաղ ու համերաշխ գոյակցությունն ապահովելու նպատակով:

Նարեկացին՝ որպես բարենորոգիչ, քաջ գիտակցում էր, որ իրականության դեմ ըմբոստացած մարդիկ ի զորու չեն ոչ իրենց, ոչ էլ հասարակությունը չարից ձերբազատելու: Այս հանգամանքն էլ Տիրոջ հետ պարուրային հաղորդակցման օգնությամբ «ես»-ը նորոգելու և շրջապատը երկխոսության և բանավեճի միջոցով նորովի ընկալելու հնարավորություն է տալիս մարդուն: Նարեկյան գաղափա-բախոսության արժեքային համակարգը իր պարուրային հաղորդակցմամբ տա-բածական բազմաչափության մեջ համադրում է ես, նա, մենք դերակատարներին: Եվ միայն այս դեպքում է, որ ես-ը, ինքնամաքրման, ինքնակատարելագործման ընթացք ապրելով, պարուրաձև զարգացման գործընթացում բարոյականության և բարության արժեքներով է առաջնորդվում, որոնք էլ օգնում են մարդկությանը՝ կարևորելու տեսակային բազմազանությունը՝ իրականության մեջ ներդաշնակ ապրելու համար:

Մարդու ինքնամաքրման, ինքնակայացման գործընթացում գերակա դեր հատկացնելով հավատին՝ Նարեկացին մարդու մասին իր տեսությունն ամբողջացնում է՝ Քրիստոսի կերպարով: Քանի որ Քրիստոսը բանականության էկոլոգիայի արարողն է, ուստի Նարեկացին, նրա նմանությամբ, Մարդուն օժտում է «մտքով, իմաստությամբ», «իմանալի հոգու շնորհով» և ոգեղենականության օգնությամբ փորձում է բացահայտել ինչպես ճշմարտությունը, այնպես էլ իսկությունը: Այս համատեքստն էլ ուղեցույց է Նարեկացու ընկալած «ես»-ի ներքին և արտաքին մարդու կերպարի միասնական ընկալման համար: Այն ժամանակային հայեցակարգում իբրև ելակետ օգտագործելու դեպքում բացահայտվում են մի շարք իրողություններ. եթե քրիստոնեական ժամանակը սկսվում է արարմամբ և համակարգվում Քրիստոսի ծննդով, տարածվում հայտնություններով, մաքրագործմամբ, ապա պետք է ակնկալել, որ այս տեքստի կենսապարբերաշրջանի ծիրը «ես»-ի՝ ներքին և արտաքին հորիզոններով տեղավորվում է վերջավորի տիրույթներում: Ակնհայտ է, որ այս ծիրն իր տիեզերաբանությամբ ավարտվում է թերահավատության ճգնաժամով՝ համապատասխան վարքագիծ ու վերաբերմունք պարտադրելով «ես»-ին (Քրիստոսին հավատացին, երբ տեսան համ-բարձված): Մինչդեռ նարեկյան մշակույթի ժամանակն անվերջ է՝ հագեցած հավատի, հույսի ու սիրո մտայնությամբ. այստեղ ներքին և արտաքին «ես»-ի ինքնակատարելագործումը ոչ սկիզբ ունի, ոչ վերջ: Ընդհակառակը, գոյություն ունի մի բարձրագույն՝ վերիմացական վիճակ՝ անվերապահ հավատի միջոցով փոխակերպում գոյու-

թյան այլ՝ չգիտակցված և անիմանալի ձևերի: «Ես»-ի ներքին և արտաքին մարդու կառուցակարգում տեղի ունեցող հակամարտությունները պետք է դիտարկվեն իբրև անվերջ՝ սկիզբ և ավարտ չենթադրող գործընթաց, որը գարնան անծայրածիր, հորդառատ ու ալեկոծ գետերի նման գալիս է անվերջությունից և շարժվում դեպի անվերջություն՝ իր կուտակած կենսալիցքով լցվում օվկիանոս, փոխակերպվում այլ «ես»-երի: Մարդու ներքին և արտաքին «ես»-երի կեցության մեջ տեղի ունեցող հակամարտությունը հնարավորություն է տալիս նրան փորձով կարևորել ոգեղենականությունն ու նյութականությունը: Նարեկյան մշակույթը ուղղված է այդ հակասության հայեցակարգմանը՝ բացահայտելով այդ գործընթացի արժեքային բազմաչափությունը և ակնկալելով տարաբնույթ դերակատար «ես»-եր: Նրանք էլ կդրսևորեն համապատասխան վարքագիծ ինչպես երկխոսության, այնպես էլ բանավեճի ընթացքում՝ չենթադրելով ո՛չ սկիզբ, ո՛չ վերջ: Այդ ամենի շնորհիվ գոյի և չգոյի «ես»-երը ժամանակի մեջ իրենց կենսաէներգիան տարածում են հանուրի և հասարակականի վրա: «Ես»-ը ներկայացնելով «հանգույց-ցանց» տարածական հարթություններում՝ նարեկյան մշակույթի պարույրը գոյի և չգոյի փոխհարաբերությունները դիտարկում է հանգույց-ցանց առնչության տիրույթներում: Համաձայն որի՝ ներքին և արտաքին մարդու շաղկապվածությունը հարաբերականորեն միասնության և բաժանելիության մեջ գտնվող իրականություն է, իսկ «ես»-ի անհատական էությունը՝ սոսկ պատրանք: «Ես» կազմող ցանցերը, ոչ սկիզբ ունեն ոչ վերջ, հարափոփոխ են, հանգույցները ամրագրում են ժամանակը, որն էլ հենց կաղապարում է «ես»-երի փոխակերպումները: Ցանցերը «ես»-ին հնարավորություն են տալիս հարատևելու, մինչդեռ հանգույցները «կարող են կոշտ լինել»: Այս ամենն իր ազդեցությունն է թողնում «ես» կազմող ներքին և արտաքին մարդու ընկալումների վրա, որն էլ հնարավորություն է տալիս այդ տիրույթներում հակամարտությունը դիտարկել որպես գերակա նշանակություն ունեցող, այլ «ես»-երից կազմված և «մենք»-ի ներսում սկիզբ առնող երևույթ: Նման «մենք»-ը չպետք է հասկացվի իբրև միաժամանակ գործող հանգուցված ինչ-որ գոյ. այն ցանց է, որը, տարբեր կողմերից տարածվելով, շաղկապում է անհատական և հանրային կյանքի բազմաչափությունների տրամաբանական միասնությունը: Այս չափումներում որոշիչը կատարվածի բարոյական մղումներն են, որոնք ձևավորում են անհատին: Նրման պարագայում էլ նարեկյան մշակույթը հնարավոր է համարում, որ ձևավորված մարդը (հանրային ցանցի կառուցվածքային տարրը) անհատ է դառնում, երբ նրա գործողության բարոյական մղումները հանրության մաս են կազմում (արիստոտելյան պոլիտեա): Այս ամենով պայմանավորված էլ Նարեկացին մարդու գերակա դերակատարությունը հնարավոր է համարում, եթե նա իր արարքներում կամքը զուգամիտում է պատասխանատվությանը՝ «երբեմն ջրվեժելով, երբեմն լեռն ի վեր մագլցելով», «անդունդը գահավիժելով ճյուղավորված գետաբազուկներով»:

Ըստ էության, նարեկյան մշակույթը երկսայրի է՝ մի դեպքում «ես»-ի հակամարտությունն է՝ վերջավոր ժամանակի, մյուսում՝ հանուրի հակամարտությունը՝ լինելու, հարատևելու անվերջավոր ժամանակի մեջ: Առաջինում առկա է հարաբերական անկախության մեջ գտնվող անհատների գործունեության փոխլրացվածությունը, իսկ երկրորդում կարևորվում է համակեցության միջոցով ինքնաճանաչողության հասնելու և երևույթների միջև եղած կապը տեսնելու անհրաժեշտությունը: Երկուսից ոչ մեկն էլ գերակա չէ. դրանք միմյանց լրացնում, փոխպայմանավորում են՝ Մարդուն հնարավորության տալով ապրել տեսակային բազմազանությամբ և աշխարհի հետ ներդաշնակ:

ЧЕЛОВЕК КАК ПРИОРИТЕТНАЯ ФИГУРА В ФИЛОСОФИИ ГР. НАРЕКАЦИ

МАРГАРЯН М. М., ЗАКАРЯН М. Г.

Резюме

В основе концепции основоположника армянского Ренессан-са – Гр. Нарекаци (951-1003 гг.) лежит проблема человека. Будучи выразителем царивших в то время социально-политических отношений, Гр. Нарекаци исследует в своих произведениях человеческую сущность, его нравственный облик, обусловленный отношением к себе подобным. Феномен человека Гр. Нарекаци рассматривает сквозь призму многомерной любви, придавая огромное значение многомерности пространства и времени.